

իւր սիրելի զուտորը զոր է որ խափանուեցաւ ամուսնութիւնը Ղուկաս Անի-  
շորին հետ, որն որ զժբաղզ հետեանք պիտի ունենար զստեր նկատմամբ։  
Ստեփան Մայնաշի բոլոր բարկութեան հեղեղը ընդդէմ ժողովրդապետին  
ուզղեց, ամէն բանի համար զինքը մեղադրելով։

— Ողորմելի զժբա՛ղզ արարած — ալէկոծեալ բարկութեամբ կ'որոտայր  
ի ներքուստ — խայտառակեցի՛ր զիս։ Ի՞նչ պիտի ըսէ աշխարհքս, երբ իմա-  
նայ՝ թէ անպիտան աղջկան մը համար, փեսացուս թողուց իմ զուտարս։  
Գեղեցիկ օրինակ պիտի ըլլայ այս բոլոր աղջկանց, որոնք ասկէց ետքը. մէկ  
զի պիտի թողուն առաքինութեան ճամբան մի միայն անոր համար, որ այս  
քահանայն իւր պաշտպանութեան ներքեւ առնելով զիրենք իւրաքանչիւրին ա-  
մուսին զտնայ. իսկ առաքինի, պարկեշտ աղջկանք ամուսնի ձերանան պիտի։

Հիմայ ի՞նչ կերպով իմացընեմ ես խեղճ զստերս, որ իւր փեսայացուն,  
քահանային խօսքերուն նայելով՝ անպարկեշտ աղջկան մը համար թողուց զինքը։

Ա՛հ, ի՞նչ աստիճանի կ'ատեմ ես հիմայ այդ ձևացեալ բարեպաշտ քա-  
հանայն, որ իւր կեղծաւորութեամբը մարդկանց սէրը կրցեր է զրտել...

Յանկարծակի զժողային հնարք մը միտքը ինկաւ. զէմքը զիւրական երեւոյթ  
ասացաւ։

— Կը ծածկեմ աշխարհիս զիմաց՝ ընդդէմ քահանային ունեցած ատե-  
լութիւնս, բայց ընտանեացս պատճառած ամօթոյն և նախատանաց համար,  
վրէժս պիտի հանեմ իրմէ։

Շարաշարելի

ԱՐԵՒՈՒ ԽԱԽԱՐՈՒՄՆ Ի 1/16 ԱՊՐԻԼԻ 1893

**Մ**ԵՐ ընթերցողաց արդէն ծանօթ էր այս տարուան օրա-  
ցուցէն՝ խաւարման օրը և ժամը, որ և միայն նշանակած էր  
մասամբ տեսանելի ըլլալն ի կ. Պոլիս, թէպէտ նոյն էր և վե-  
նետկոյ համար ևս. սակայն սակաւ հանդիպելուն պատճառաւ՝  
հետաքրքրական է և մասնականն։ Մեր դիտողութեան աստե-  
ղական փոքրիկ հեռադիտակի երկայնութիւնն էր 0, 57, իսկ առ-  
արկայական ոսպնածակի տրամագիծն 0, 10. Պայծառ անամկ  
օր մ'էր. մինչդեռ արևու բիծերը գիտէի, սպասելով այն վայր-  
կենին՝ յորում լուսնոյ շրջապատն արևու շրջապատին պիտի դի-

մնադրէր, յանկարծ սե կէտ մի մերձեցաւ յարև. այս վայրկենիս ժամանակաշափն ճիշդ ժամը 4, 28 կը ցուցընէր՝ երբ խաւարումն սկսեալ էր Ս. Ղազար վանացս և վենետկոյ համար, Շօշափման կէտն՝ արևու հիւսիսէն 1390 վար դէպ արևելեան հարաւ էր: Խաւարումն յառաջեց մինչև ժամը 5, որ մեզ համար ծայրագոյն էր, իբր 0, 14 արամագծի արևու, մինչդեռ կ. Պոլսոյ համար 0, 10, իսկ Պարիսու համար 0, 028՝ որ ոչինչ ըսել է: Ապա երթալով նուազեցաւ և ժամը 5, 30 երկու գնտերն իրարմէ անջատեալ էին: Ամէն տարի խաւարմունք կը պատահին արևու կամ լուսնի, ոչ երկուքէն նուազ և ոչ եօթէն աւելի, և երբ տարի մը երկու միայն խաւարմունք ըլլայ՝ միշտ արևու խաւարմունք է, ինչպէս այս տարի:

Բոլորական խաւարմանս գծին ծռութիւնը ցուցունելու համար. թէ ո՞ր երկիր, ի՞նչ աստիճան երկայնութեան և լայնութեան տակ, ո՞ր ժամը՝ սկիզբ, մէջ և վերջ խաւարման կը հանգրիպի, յետագայ ցուցակն կը գնենք:

Արդ ընդհանուր խաւարման ...	0°, 64, 80''	- 85° 38'	Երկայն. - 33° 7'	Լայնութեան տակ
- բոլորական խաւարման ...	1, 2, 3 ...	- 98° 17'	Երկայնութիւն - 36° 27'	" "
Մէջ խաւարման	2, 36, 4 ...	- 39° 10'	" - 1° 4'	" "
Վերջ բոլորական խաւարման ...	4, 29, 1 ...	+ 26° 3'	" + 16° 31'	" "
- ընդհանուր խաւարման ...	5, 24, 5 ...	+ 13° 27'	" + 49° 48'	" "

Արդ ներկայ ցուցակէս կ'իմանանք որ Ափրիկէի հիւսիսային արևմուտքէն մինչև հարաւային Ամերիկա կը ձգուի խաւարման գիծն: Երկայնութիւն բոլորական խաւարմանն ի Բրասիլ տեկց 44 46<sup>o</sup>, ի Սենեգալ 44 10<sup>o</sup>, յԱրճենդինայ 34 5<sup>o</sup>, ի Գիբի 24 56<sup>o</sup>: Այս խաւարումն ինչպէս կըսէ. Հ. Գենցա ամենէն երկարատեն էր, և այս դարու համար վերջինս: — Բոլորական խաւարումն աստեղագիտաց համար քննութեան առիթ մ'է, նոյն իսկ տէրութիւնը այս պատճառաւ ղրկեցին իրենց մեծամեծ աստեղագէտքը. ինչպէս Գազդիան զԳր. Բիգուրդան, որ ունէր զօրաւոր հեռագիտակ մի, որոյ առարկայական ոսպնածեի տրամագիծն էր 0, 31. Նոյնպէս Անգղիա ղրկեց զՊր. Տայլորն. Միացեալ իսահանգք՝ զՊր. Աքեբերլէն, նաև Սպանիա Սանդեագոյի աստեղագէտքը. Իտալիոյ լրագիր մի կ'ըսէ թէ Իտալիան մասն չունեցաւ յայտմ: — Մինչդեռ այժմ հեռի աշխարհներէ գիմեն գիտելու համար այս երևոյթս, հիներն ընդ հակառակն դժբաղդութեան գուշակ կը համարէին և նշան գից բարկութեան \*,

\* կը պատմուի որ Մարաց և Արգանց պատերազմէն առաջ արևու խաւարումն

այժմ՝ ամենուն յայտնի է խաւարումն երկրիս և լուսնոյ շրջաններուն պատճառաւ ըլլալն :

Բայց աստեղագէտք պարզ հետաքրքրութենէ շարժեալ չեն երթար դիտելու այս երևոյթս, այլ քննելու պատահար մի՝ որ ցարդ անլուծանելի մնացեր է, և 1868ին խաւարմանէն ըսկըսեալ լուսապատկերացուցով եղած նոր դիտողութեամբք ալ կատարեալ ծանօթութիւն մեզ չեն տուած : Ի՞նչ է այս երևոյթս. — երբ լուսինն արևու և երկրիս մէջ հանդիպի, երկրիս մի մասն բոլորովին կը խաւարի. այն տեղէն եթէ լուսինը դիտենք՝ նորա բոլորովին կը տեսնենք լուսաւոր բակ մի. աստեղագէտք կ'ուզեն իմանալ՝ ի՞նչ է այս բակը, արդեօք արևու կը վերաբերի թէ երկրիս մթնոլորտին : Տարակուսանաց պատճառն ասկից կը ծագի, որ արևուն տրամագիծն ըլլալով 31' 55" 4, ընդհակառակն լուսնոյ 33' 7" որով սա բոլորովին ծածկելով արեգակը՝ այն տեղոյն համար այս երևոյթս առաջ չպիտի գար : Սակայն այս երևոյթս միայն բոլորական խաւարման ժամանակ տեսանելի ըլլալուն համար, աստեղագէտք երկու տեսակ դիտողութիւն կ'ընեն բակին վրայ. ոմանք, անոր տարրաբանական բաղադրութիւնը կը քննեն լուսապատկերի ձեռք, այլք ի ձեռն լուսանկարի և լուսաչափի՝ լուսոյ սաստկութիւնն և տարածականութիւնը կը չափեն. և կը համարին բոցերու երկայնութիւնը իբր 45 միլիոն մետր : Իսկ այլոց՝ բակի լուսոյ բևեռացումն կարծիք տուաւ՝ թէ արևու շուրջ կը գտնուին այնպիսի նիւթեր՝ յորս արևու յատուկ լոյսն կ'անդրադառնայ, ինչպէս այդ կը կատարուի մեր մթնոլորտին մէջ :

Բայց աւելի այս երևոյթս լուսնոյ մթնոլորտին պէտք է տալ. վասն զի երբ լուսինն զարևը ծածկէ, լուսնոյ օդն լուսաւորուելով արևէն՝ այս լուսոյ բակը մեզ կ'երևցընէ : Մինչև ցարդ այս վերջին խաւարման վրայ եղած դիտողութիւնք չյայտնուեցան :

րումն մի հանդիպեր է, զօրքերը նշան ցասման դից կարծելով՝ պատերազմէն ետ կեցեր են, և երկու թագաւորք հայտութիւն ընելով պատերազմը դադրեցուցեր են : Թաղէս հաշուով իմացաւ այս խաւարման օրն և ժամանակն, որով առաջին խաւարումն կը յիշատակուի հաշուով գտնուած :

Հ. Խ. Սիևսեան